ՏԵՂԵԿԱՆՔ

Հայաստանի Հանրապետության կառավարության և Ֆրանսիայի Հանրապետության կառավարության միջև պաշտպանության ոլորտում համագործակցության վերաբերյալ համաձայնագրի կնքման նպատակահարմարության մասին:

Հայաստանի Հանրապետության կառավարության և Ֆրանսիայի Հանրապետության կառավարության միջև պաշտպանական ոլորտում համագործակցության վերաբերյալ համաձայնագիրը հանդիսանում է կողմերի միջև պաշտպանության ոլորտում համագործակցության հարցերը կարգավորող առաջին փաստաթուղթը: Այն նախատեսում է համագործակցության մի շարք ոլորտներ, որոնցից հատկանշական են զինված ուժերի կազմակերպման և սպառազինման տեսակների, տարածքային և օպերատիվ հրամանատարության կազմակերպման, շտաբների աշխատանքին, հրամանատարության մեջ ինֆորմատիկայի դերին, քաղաքացիական և զինվորական անձնակազմերի ղեկավարման և կառավարման, Կողմերի զինված ուժերում հասարակական հարաբերությունների, կապի և տեղեկատվության, պաշտպանությանն ու զորքերին առնչվող օրենսդրության և այլ հարցերը: Համագործակցության հիմնական ձևերն են երկու կողմերի և զորքերի պաշտոնական պատվիրակությունների այցերը, ստաժորների հյուրընկալումը Կողմերի ռազմական ուսուցման կենտրոններում և հաստատություններում՝ թափուր տեղերի առկայության դեպքում, զինվորական հաստատությունների զինվորական և քաղաքացիական անձնակազմերի հանդիպումները, խորհրդակցությունները և փորձի փոխանակումը կոնֆերանսների, սիմպոզիումների, գիտաժողովների, սեմինարների տեսքով, ոչ անձնական բնույթի փաստաթղթերի, ուսումնասիրությունների և տեղեկատվության փոխանակումը, տեխնիկական փորձագետ-սպաների փոխանակում և այլն:

Նախատեսվում է, որ Ընդունող կողմը Ուղարկող կողմի ռազմական և քաղաքացիական անձնակազմերին անվճար տրամադրում է իրենց վարչական գործողություններին անհրաժեշտ միջոցներ: Ուղարկող կողմը, համաձայն իր պետության բյուջետային հնարավորությունների, հոգում է իր զինվորական և քաղաքացիական անձնակազմերի ճանապարհի, օթևանի և սննդի ծախսերը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետության կառավարության և Ֆրանսիայի Հանրապետության կառավարության միջև պաշտպանության ոլորտում համագործակցության վերաբերյալ համաձայնագիրը բարենպաստ պայմաններ կստեղծի երկու երկրների միջև պաշտպանության ոլորտում համագործակցություն հիմնելու և զարգացնելու համար, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունը համաձայնագրի կնքումը համարում է նպատակահարմար:

ՀՀ պաշտպանության նախարար Ս.ՕՀԱՆՅԱՆ